Արձանագրություն N 2

**ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով «Քասախ համայնքի Գազատարի կառուցման աշխատանքների կատարման» ձեռք բերման գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

գ. Քասախ

03. հուլիսի. 2019թ
ժամը 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ավետիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Սարգսյան, Ս. Հովհաննիսյան, Ռ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարտիրոսյանը

**1. 2019թ. ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացման մասին**

(Ս. Ավետիսյան)[1]

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ Հրավերի 1-ին մասի 4-րդ կետի և II-րդ Մասի պահանջներին համապատասխան սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակցներ | |
|---|---|---|
| | Մասնակցի անվանումը | Հասցեն, հեռախոսահամար |
| 1. | **«ՀԱԲ-ԳԱԳ ՇԻՆ» ՍՊԸ** | Տնօրեն՝ Ս. Սիմոնյան, Արարատի մարզ, գ. Նարեկ, հեռ 055 880599 |
| 2. | **«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ** | Տնօրեն՝ Ս. Կոոյան, Գեղարքունիկի մարզ, գ. Սարուխան հեռ. 093202178 |
| 3" | **«Արհովշին» ՍՊԸ** | Տնօրեն՝ Ա. Գրիգորյան ք. Երևան, Արշակունյանց 48/2 2. Բն. 3 հեռ 096080877 |
| 4. | **«ԱԲԱԿ» ՍՊԸ** | Տնօրեն՝ Ա. Սարգսյան, ք. Երևան, Սիլիկյան 1-ին փողոց. 20 տուն |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

**2. Գնանշման հարցման ծրարի կազմման և ներկայացման, ինչպես նաև ծրարով ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին**

(Ս. Ավետիսյան)[2]

2.1 հրավերով (ծանուցումով) սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտ չեն ներկայացրել:

2.2 Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և համապատասխանության մասին. Մասնավորապես

- չեն համապատասխանում է **«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ** –ի և **«ՀԱԲ-ԳԱԳ ՇԻՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտերում առկա հավելվածների համապատասխանությունը հրավերի պահանջներին:

- համապատասխանում է **«Արհովշին» ՍՊԸ**-ի և **«ԱԲԱԿ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտեր:

**3. Գնանշման հարցման մասնակցի ծրարով ներկայացրած փաստաթղթերի համապատասխանության մասին**

(Ս. Ավետիսյան)[3]

[1] Նշել զեկուցող հանձնաժողովի նախագահի անունը
[2] Նշել զեկուցող հանձնաժողովի նախագահի անունը
[3] Նշել զեկուցող հանձնաժողովի նախագահի անունը

3.1 **«ՀԱԲ-ԳԱԳ ՇԻՆ» ՍՊԸ** -ի ծրարով ներկայացված հայտում առկա են հետևյալ փաստաթղթերը՝

- Հավելված N1. Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն
  - ✓ առկա է.
- Հավելված N2 Գնային առաջարկ
  - ✓ **առկա է, սակայն նրանց կողմից ներկայացված գնային առաջարկում (հավելված 2) 5-րդ սյունակում ներկայացված գինը թվերով և տառերով տարբեր են, որը չի համապատասխանում սյունակներ 3-ի և 4-ի տառերով գրված հանրագումարին, ինչպես նաև ներկայացվել է 1 պատճեն 2-ի փոխարեն:**
- Համապատասխան լիցենզիաները
  - ✓ Առկա է

**3.2 «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ** –ի կողմից ներկայացված հայտում առկա են

- Հավելված N1. Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն
  - ✓ առկա է.
- Հավելված N2 Գնային առաջարկ
  - ✓ առկա է, ***սակայն գնային առաջարկում սխալ է լրացված եղել գնման ծածկագիրը:***
  - ✓ Համապատասխան լիցենզիաները
  - ✓ Առկա է

**3.3 «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ** –ի կողմից ներկայացված հայտում առկա են

- Հավելված N1. Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն
  - ✓ առկա է.
- Հավելված N2. Գնային առաջարկ
  - ✓ առկա է.
- Համապատասխան լիցենզիաները
  - ✓ Առկա է

**3.4 «ԱԲԱԿ» ՍՊԸ** –ի կողմից ներկայացված հայտում առկա են

- Հավելված N1. Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն
  - ✓ առկա է.
- Հավելված N2. Գնային առաջարկ
  - ✓ առկա է.
- Համապատասխան լիցենզիաները
  - ✓ Առկա է

2.3 Հանձնաժողովն որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի, 2-րդ ենթակետի և 41-րդ կետի պահանջները **մերժել ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցներ** «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ –ին և «ՀԱԲ-ԳԱԳ ՇԻՆ» ՍՊԸ-ին, **նրանց կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերի անհանապատասխանության համար:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

### 4. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ս. Ավետիսյան)[4]

| N | Չափաբաժնի համարը և գնման ենթակա ապրանքների անվանումները/ Կազմակերպության անվանումը | | «Քասախ համայնքի Գազատարի կառուցման աշխատանքների կատարում» | |
|---|---|---|---|---|
| | Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը | Գնային առաջարկը ներկայացված է առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) | ԱԱՀ (ՀՀ դրամ) | Գնային առաջարկի ընդհանուր արժեքը ներառյալ ԱԱՀ-ը (ՀՀ դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | «ԱԲԱԿ» ՍՊԸ | 31.580.000 (երեսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) | 6.316.000 (վեց միլիոն երեք հարյուր տասնվեց հազար) | 37.896.000 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար) |
| 2. | «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ | 37.639.000 (երեսունյոթ միլիոն վեց հարյուր երեսունինը հազար) | 7.527.800 (յոթ միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր) | 45.166.800 (քառասունհինգ միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար ութ հարյուր) |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:[5]

### 5. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին.

5.1. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա նախնական տվյալներով.

✓ *ա) I տեղ զբաղեցնող է ճանաչվել.*

1-ին չափաբաժնի մասով **«ԱԲԱԿ» ՍՊԸ** -ն:

✓ *ա) II տեղ զբաղեցնող է ճանաչվել.*

1-ին չափաբաժնի մասով **«ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ** -ն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

### 6. «ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնահատող հանձնաժողովի գնահատման նիստը նշանակելու մասին

(Ս. Ավետիսյան)[6]

6.1 «ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերում նշված էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

[4] Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը
[5] Ըստ 13-րդ կետի
[6] Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը

եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ Հավելված 6:

Միևնույն ժամանակ հրավերի ընթացակարգի 1-ին մասի 7.12 կետի 4)-ի ենթակետով սահմանված՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան որակավորման փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին, գ. Քասախ Ս. Ջալալյան հրապարակ 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:[7]

Հանձնաժողովի

նախագահ — Ս. Ավետիսյան

անդամներ — Ռ. Խաչատրյան

Հ. Սարգսյան

Ս. Հովհաննիսյան

քարտուղար — Ա. Մարտիրոսյան

---

[7] Ըստ 13-րդ կետի